

Արմինե Զոհրաբյան

Պատմական գիտությունների թեկնածու

Հայաստանի պատմության թանգարան

zohrabyanarmine@yahoo.com

Բորիս Գասպարյան

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և Ազգագրության ինստիտուտ

borisg@virtualarmenia.am

Անի Ադիգյոզալյան

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և Ազգագրության ինստիտուտ

aniadigyozyan@gmail.com

ԿՇՈՒՍՔԱՐ՝ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ԱՐՏԱՇԱՏ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻ ՏԱՐԱԾՔԻՑ*

Հիմնաբառեր. Կշռաքար, ծովախեցի, դրամակշռային համակարգ, Արտաշատ, շեկե, հեղինիստական, Լևանտ:

Ներածություն

Անտիկ ժամանակաշրջանի կշռաքարերը ընդհանրապես քիչ են հանդիպում, ուստի ամեն մի նման գտածո կարող է նոր խոսք լինել ոչ միայն Հայաստանի տնտեսության և մշակույթի պատմության, այլև տարածաշրջանի անտիկ հնագիտության մեջ:

Հողվածի ուսումնասիրության առարկա կշռաքարը անտիկ Հայաստանի մայրաքաղաք Արտաշատից, ցավոք, գտնվել է ոչ թե պեղումների ընթացքում, այլ ձեռք է բերվել մասնավոր անձից: Դա հնարավորություն չի տալիս լիարժեք ուսումնասիրել կշռաքարը իր հնագիտական միջավայրում, ինչն ավելի շատ հարցերի պատասխան կարող էր տալ: Հայաստանից, այդ թվում Արտաշատ մայրաքաղաքից անտիկ շրջանի կշռաքարերի հայտնաբերման մասին տվյալները գրեթե բացակայում են: Առաջին հայացքից դա տարօրինակ է թվում, հատկապես եթե հաշվի առնենք Արտաշատի տարածքից հայտնաբերված օտար երկրների դրամների ոչ քիչ քանակը, մի քանի հազար կնքադրոշմները և ներմուծված բարձրարժեք առարկաները, որոնք քաղաքի՝ զարգացած առևտրի կենտրոն լինելու վկայությունն են:

* Ստացվել է 07.08.2023թ., ուղարկվել է գրախոսման 16.08.2023թ., ընդունվել է տպագրության 01.11.2023թ.:

Կշռաքարի նկարագիրը և չափագիտական բնութագիրը

Արտաշատ մայրաքաղաքի տարածքից հայտնաբերված բրոնզե կշռաքարը ունի երկվիտեղ *scallop* ծովախեցու տեսք: Կշռաքարի քաշը 135,89 գ. է, չափը՝ 43,3x31.8x21.7 մմ: Ծովախեցու ձև ունեցող կշռաքարերը, ըստ մասնագետների կարծիքի, ձուլվել են կավե կաղապարի մեջ, որի փորվածքը ստացել են թաց կավի մեջ իսկական ծովախեցիով դրոշմելու եղանակով: Արտաշատի կշռաքարի քաշը համապատասխանում է տասը շեքելի՝ ըստ տյուրոսյան թեթև կշռային ստանդարտի: Փյունիկիայի տյուրոսյան դրամակշռային համակարգի հիմնական միավոր շեքել/տետրադրախման/ստատերի քաշը տարբեր ժամանակներում՝ տարբեր քաղաքական-տնտեսական հանգամանքներից ելնելով՝ տատանվել է 12.5-ից մինչև 14.5 գրամ: Այդ կշռային համակարգի վրա էին կառուցում իրենց դրամական տնտեսությունը Միջերկրական ծովի արևելյան տարածքները, որի շեքել/տետրադրախման ավելի թեթև էր կշռում քան ատտիկյան տետրադրախման (մոտ 15.5 – 17.5), որին հետևում էին Սելևկյանները և Արտաշեսյանները:

Ծովախեցու ձև ունեցող կշռաքարերը բնորոշ են հատկապես Միջերկրածովյան ավազանի արևելյան շրջաններին (Լևանտ), որոնց հետ Հին Հայաստանի կապերը ունեն դարավոր պատմություն: Բնական է, որ ծովային առևտրի կենտրոններ հանդիսացող վայրերում, ինչպիսին էին Փյունիկիայի քաղաքները, Նաբաթեան, Հրեաստանը, պետք է պատրաստվեր ծովախեցու ձև ունեցող կշռաքար: Այդ տարածքները հելլենիստական շրջանում գտնվում էին Պտղոմեոսյան Եգիպտոսի տնտեսական ազդեցության ոլորտում, որտեղ դրախման ավելի թեթև էր կշռում, քան Սելևկյան Սիրիայում: Ծովային առևտրում գերակա դեր ունեցող քաղաքակրթությունները (դրանք հիմնականում վաճառաշահ նավահանգստային քաղաքներն են, օժտված որոշակի ինքնուրույնությամբ) իրենց կարող էին թույլ տալ այնպիսի շոյություն, ինչպիսին թեթև քաշով դրամի թողարկումն է, այն դեպքում, երբ խիստ կենտրոնացած իշխանությամբ երկրներում արծաթե դրամն ավելի ծանր էր կշռում, որը, որքան էլ տարօրինակ թվա, ոչ բավարար զարգացած ապրանքադրամային հարաբերությունների դրսևորում է: Ավելին, անգամ նույն կայսրության ներսում առավել զարգացած շրջանները հատում էին նույն կշռային համակարգի թեթև քաշի միավորներ:

Փյունիկյան շեքել/ստատերի թեթև ստանդարտը օգտագործվում էր Հրեաստանում (Hendin 2012, 125) և Նաբաթեայում (Hoover, Barkay 2010, 197 – 212)՝ մ.թ.ա. 1 – մ.թ. 1-ին դդ., որի մասին է վկայում այդ թագավորությունների արծաթե թողարկումների կշիռը:

Ծովախեցու ձև ունեցող կշռաքարեր՝ ոչ մեծ քանակությամբ հայտնաբերվել են հատկապես ժամանակակից Իսրայելի տարածքի հելլենիստական ժամանակաշրջանի հուշարձաններից:

Ի տարբերություն Արտաշատի բրոնզե կշռաքարի՝ Իսրայելի տարածքում հայտնաբերված կշռաքարերը հիմնականում կապարից են (Manns 1984, 22, Nos. 37 – 38. Hendin 2007 184, 190 – 191. Holland 2009: Nos 242 – 243¹): Դրանք տարբեր միավորների

1 Պաղեստինյան Կեսարիայում հայտնաբերված կշռաքարերը պատրաստված են բրոնզից, ի տարբերություն Իսրայելի այլ հուշարձաններից հայտնաբերվածների, որոնք կապարից են:

են (3, 4, 5, 6 շեքել), և շեքելի քաշը տատանվում է 12,5 – 13,5 գ., համապատասխանելով այն քաշին, որը բնորոշ է Հրեաստանում որպես տաճարին հարկ վճարվող տյուրոսյան դրամներին:

Ծովախեցու ձևով կապարե կշռաքարերի չափաբերումը կատարվել է արտադրության գործընթացում: Անբավարար կշիռը ուղղելու համար երբեմն կապարի բարակ շերտեր էին ավելացնում իրանին կամ կախիկներին: Քաշի շտկումը կարող էր կատարվել նաև ավելի ուշ՝ վերահաշվառման եղանակով՝ կշռաքարի մաշվելու դեպքում (Klein, etc. 2022, 272): Կապարե կշռաքարերը հավանաբար պատրաստված են ջրի մեջ հեղուկ կապարի կաթիլ-կաթիլ լցնելով:

Ըստ մասնագետների կարծիքի՝ ծովախեցու ձև ունեցող կշռաքարերը հիմնված են տեղական (իմա՝ Հրեաստան) շեքելի ստանդարտի վրա՝ մոտ 12–13 գ. (Klein, etc. 2022, 273): «Նման կշռաքարերի չափագիտությունը սովորաբար հետևում է տեղական քաղաքային չափանիշներին, որը վկայում է զարգացած շուկայական տնտեսության մասին: Հունական քաղաքները, ինչպես նաև դրանց արևելյան տարբերակները օգտագործում էին քաղաքների պաշտոնական կշռային ստանդարտները: Կշռաքարերը սովորաբար արտադրվում էին բրոնզից կամ կապարից, իսկ բրոնզն ավելի հազվադեպ էր պահպանվում, հավանաբար այն պատճառով, որ այն ավելի հաճախ էր վերամշակվում» (Klein, etc. 2022, 272):

Մեր կարծիքով, բրոնզե կշռաքարերի սակավությունն այլ պատճառներ ունի Դրանք, ինչպես օրինակ Արտաշատից հայտնաբերվածը, պատրաստվել են ավելի բարդ եղանակով. բրոնզը լցվել է կաղապարի մեջ միանգամից՝ առանց հետագա չափաբերման հնարավորության: Պետք է ճիշտ հաշվարկվեր ինչպես կաղապարի փորվածքի խորությունը, այնպես էլ դրա մեջ լցվող համաձուլվածքի մետաղային հարաբերակցությունը, որն ավելի բարդ տեխնոլոգիա էր, քան կապարից կշռաքարի ստացման դեպքում: Դրանով է բացատրվում, որ բրոնզե կշռաքարերն ավելի քիչ են հանդիպում:

Կշռաքարերը, որոշակի ճանաչելի արտաքին տեսքով, ինչպես օրինակ scallop ծովախեցին, կարող էին լինել այս կամ այն քաղաքի խորհրդանիշը: Մեկ այլ դեպքում դրանց վրա փորագրած նշանները առնչվում էին պետական գաղափարախոսությանը: Բրոնզե կշռաքարերը պատրաստվել են քաղաքական-տնտեսական առումով առաջնային նշանակություն ունեցող կենտրոններում: Մեր կարծիքով, հենց բրոնզե կշռաքարերն են դուրս եկել իրենց պատրաստման վայրերից և կիրառվել միջազգային շուկայում որպես առավել հուսալի և ընդունելի միջոց՝ շտրիկի իրենց երաշխիքային ճիշտ քաշի, որոնք չեն կարող ավելացվել կամ պակասեցվել, ինչպես կապարի կշռաքարերի դեպքում: Միգուցե դա է պատճառը, որ բրոնզե կշռաքարերը գրեթե բացակայում են Իսրայելի տարածքում պեղված հուշարձաններում՝ բացառությամբ Պաղեստինյան Կեսարիայի (Caesarea Maritima) (Holland 2009, Nos. 242–243), ինչն ունի իր բացատրությունը: Այն ի սկզբանե Միջերկրական ժովի ափին գտնվող փյունիկյան բնակավայր էր: Սակայն դրա տեղում կարևոր տնտեսական և ռազմավարական նշանակություն ունեցող քաղաքի հիմնումը կայում են Հրեաստանի թագավոր Հերովդես Մեծի հետ, ով վերակառուցեց և ընդարձակեց այն մ.թ.ա. 22–10 թթ. և կոչեց իր հովանավոր Կեսար Օգոստոս կայսեր

անունով՝ դարձնելով այն Հրեաստանի գլխավոր նավահանգստային քաղաքը: Մ.թ. 6թ. այն դարձավ Հռոմեական Հրեաստան նահանգի, իսկ 2-րդ դարից՝ Միրիա-Պաղեստին անվանումը ստացած հռոմեական նահանգի մայրաքաղաքը:

Միջերկրածովյան ավազանի հելլենիստական հուշարձաններից հայտնաբերված կշռաքարերը հիմնականում երկու ձև ունեն՝ ծովախեցու և մահիկի: Ծովախեցու ձև ունեցողները հենված են արևելյան ծագում ունեցող մինայի վրա, որի 1/60-ը շեքել/սիկլոն է, երկրորդ մահիկաձև կշռաքարերը՝ հռոմեական լիտրի վրա, որի 1/12-ը ունցիան է (Klein, etc. 2022, 273): Մեմոնցիան կամ 1/2 ունցիան կշռով մոտ էր հրեական/տյուրոսյան շեքելին: Թերևս դա է պատճառը, որ մասնագետները ծովախեցու ձև ունեցող կշռաքարերը համարում են ավելի վաղ՝ վերագրելով հելլենիստական, կամ ավելի ստույգ՝ սելևկյան ժամանակաշրջանին:

Սակայն ծովախեցու ձև ունեցող կշռաքարերը ավելի թեթև են կշռում, քան փյունիկյան լիարժեք շեքել/ստատերները, որը հիմք է տալիս ենթադրելու, որ հրեապաղեստինյան միջավայրում օգտագործվում էր փյունիկյան դրամակշռային համակարգի ավելի թեթև ստանդարտը: Ըստ թեթև ստանդարտի՝ հրեական շեքել/ստատերը կշռում էր մինչև 14 գ.:

Արտաշատից հայտնաբերված կշռաքարն իր կշռային ստանդարտով, արտաքին տեսքով հիմք է տալիս մտածելու, որ այն առնչվում է մ.թ.ա. 2–1-ին դդ. Հրեաստանին:

Ծեկել/սիկլը հելլենիստական ժամանակաշրջանում

Կշռաքարերը, ինչպես դրամները, տնտեսական պատմության կարևոր մասն են կազմում: Դրանք առնչվում են պետական կառավարման համակարգին, և չափ ու կշռի ստանդարտի վերահսկումը պետության գործառնություններից է: Կշռային համակարգի առաջացումը, կշեռքի գյուտը Միջագետքում մ.թ.ա. 3-րդ հազարամյակի սկզբին առևտուրը բարձրացրեց զարգացման նոր փուլի: Ամենավաղ կշռի միավորը շումերա-աքադական կշռային համակարգում, որը ենթադրում էր արծաթի որոշակի քաշով ձուլակտոր, դարձավ շեքել/սիկլը: Այդ անվանումն ընկավ Մերձավոր Արևելքի մի շարք քաղաքակրթությունների արծաթե դրամական թողարկումների հիմքում, մասնավորապես Աքեմենյան Իրանի: Հելլենիստական շրջանում շեքելը պահպանվեց Լևանտի երկրներում, մասնավորապես փյունիկյան քաղաքների դրամական անվանումներում (Iossif 2014, 67):

Բրոնզե բարձրորակ կշռաքարերի հայտնաբերումն անտիկ հուշարձաններում վկայում է զարգացած առևտրական կյանքի մասին, որը քաղաքային բարձր մշակույթի ամենավաղ դրսևորումն է: Բրոնզե կշռաքարը կարելի է համեմատել արտաքին շուկայում շրջանառվող, բարձր որակական հատկանիշներով վստահություն վայելող դրամների հետ: Նման նշանակություն ձեռք բերեցին նաև բյուզանդական բրոնզե կշռաքարերը վաղ միջնադարում, որոնցից մի քանի օրինակ հայտնաբերվել է Դվին մայրաքաղաքի պեղումների ընթացքում:

Սելևկյանները թողարկում էին ծանր քաշի դրախմաներ և տետրադրախմաներ (4, 36 գ դրախմա, տետրադրախման՝ մոտ 17գ)՝ հիմնված ատտիկյան դրամակշռային համակարգի վրա, այն դեպքում, երբ Պաղոմեոսյան Եզրիպտոսը և

նրա տնտեսական ազդեցության ոլորտում գտնվող Լևանտի տարածաշրջանը, կիրառում էին թեթև դրախման (3, 6 գ դրախմա, տետրադրախման՝ մոտ 14. 41 գ), Արծաթի ավելի թեթև քաշի վրա հիմնված համակարգը համապատասխանեցված էր տյուրոսյան և պաղեստինյան շեքելին, որին հետևում էին Հրեաստանը և Միջերկրածովյան տարածաշրջանի արևելյան երկրները, որոնց ձեռքում էր գտնվում ծովային առևտուրը սկսած դեռ նախահելլենիստական շրջանից: Այդ տարածքները պահեցին ոչ միայն արդեն եղած կշռային համակարգը, այլև արծաթ դրամի միջազեղության անվանումը՝ շեքել/սիկլը՝ մոտ 14 գրամ քաշով: Երբ Սելևկյանները ժամանակ առ ժամանակ վերցնում էին Փյունիկիան, նույնպես ստիպված էին պահպանել տեղական կշռային ստանդարտը, ինչպես արեցին Պտղոմեոսյանները (Бикерман 1985, 199)

Պ. Իոսիֆը փյունիկյան կշռային համակարգի մասին գրում է. «Մակեդոնացու նվաճումից հետո տեղական ստանդարտը փոխարիվեց ավելի ծանր ատտիկյանով: Պտղոմեոսների օրոք ստանդարտը վերադարձավ իր նախկին տեսական կշռին՝ 14,25գ տետրադրախմայի համար: Երբ Սելևկյանները վերջապես սկսեցին արծաթե մետաղադրամներ թողարկել Փյունիկիայում փակ տնտեսության ներսում օգտագործելու համար, նրանք ընդունեցին նույն ստանդարտը, որն արդեն օգտագործվում էր այստեղ...Սելևկյանների համար սովորական պրակտիկա էր օգտագործել տեղական մոդելները՝ իրենց թագավորությունը կառավարելու համար: Թեթև քաշի ստանդարտի ընդունումը, ինչպես նաև փակ տնտեսական համակարգի պահպանումը (Լևանտում) նույն քաղաքականության մասն էր. շարունակել շահույթ ստանալ թագավորական գանձարանների համար» (Iossif 2022, 70):

Մեշորերն իր գրքում ենթադրություն է առաջ քաշում, որ այն բանից հետո, երբ Հերովդեսը ավարտեց տաճարի կառուցումը, նա նաև հիմնեց դրամահատարան, որտեղ հատեց տյուրոսյան շեքելներ արծաթից, քանի որ շեքելների հատումը դադարել էր Տյուրոսում (Meshorer 1984, 171–179): Դրանց դիմերեսին պատկերված է Մելկարտ/Հերակլեսը, իսկ դարձերեսին՝ արծիվ: Հենց այդ դրամով են հրեաները վճարել տաճարի հարկը: Թավմոսյան գրականությունը ուղղակիորեն ասում է, որ «արծաթը, որի մասին խոսում է Թորան, տյուրոսյան արծաթն է, իսկ տյուրոսյան արծաթը նաև Երուսաղեմի արծաթն է» (Meshorer 1984, 172):

Ռամաթ-Ռախելի հուշարձանում, որը գտնվում է Երուսաղեմի և Բեթղեհեմի միջակայքում, հայտնաբերվել է տյուրոսյան արծաթե 15 դրամներից բաղկացած գանձ, որոնք կշռում են 13.30–13.93 գ, այսինքն միջին քաշը՝ 13,63 գ. (Farhi 2010, 62–63):

Հռոմեացիները գալով Արևելք Լևանտի վաճառաշահ քաղաքներում հատեցին դրամներ, պահպանելով ոչ միայն տեղում ընդունված կշռային համակարգը, այլև նախկինում ընդունված որոշ պատկերագրական մանրամասներ, ինչպես օրինակ արծիվը՝ ճանկերում Ջևսի խորհրդանիշ, որը Եգիպտոսի պտղոմեոսյանների և նրանց դրամային տնտեսության ոլորտում գտնվող Փյունիկիայի քաղաքների ինքնատիպ խորհրդանիշն էր: Ավելին, Հռոմը Արևելքում պահպանեց ոչ միայն նույն կշռային ստանդարտը, այլև դրամների հունարեն անվանումները:

Ճեքել/տետրադրախմամ/ստատերը հայկական միջնադարյան աղբյուրներում

Հայկական միջնադարյան աղբյուրները մանրամասն քննում են Աստվածաշնչում մեջբերված դրամակշռային միավորները, որոնք հսկայական աղբյուրագիտական նշանակություն ունեն հին աշխարհի ընդունված դրամակշռային համակարգերի ուսումնասիրման համար: 295թ. Դիոկղետիանոս կայսրը մտցնում է նոր դրամական միավոր՝ *denareus communis*, որը կշռում էր հռոմեական լիտրի 1/50, այսինքն՝ 6.548 գ: Նոր դրամական միավորը համարժեք էր Հռոմի արևելյան նահանգներում շրջանառվող դիդրաքմենին (երկդրամեան) (6.75 գ.), որը գլխահարկի արժեչափն էր:

Հայկական աղբյուրներում կա հետևյալ հիշատակությունը. «Դիդրաքմայն և սատրեն մի է: Միկղն Բդրամ: Սրբության սիկղն Իդանգ» (Վարդանյան 1989, 232): Տվյալ դեպքում խոսքը Արևելքում շրջանառվող *դանագի (օրոյ)* մասին է (20 x 0.3325 = 6.65):

Հայկական աղբյուրներում երբեմն *դիդրաքմեն* համապատասխանում է 4 դրամի. «Սատրեն կես ունկո է, որ է Դդրամի կշռորդ: Դրագմեն Բ, դիդրագմեն Դդրամնոց կշռորդ» (տե՛ս Վարդանյան 1989, 236): Թվում է, թե այս դեպքում առկա է ինչ-որ անհամապատասխանություն, որովհետև *սասրերը* հիշատակվում է 4 դրամին համարժեք այն դեպքում, երբ նախորդ հիշատակության մեջ նշվում է. «Դիդրաքմայն (2 դրամ) և սատրեն մի է»: Նման անհամապատասխանություններ հանդիպում են նաև հրեական աղբյուրներում, որոնցում *սրասրերն* օգտագործվում էր և՛ դիդրաքմեի, և՛ տետրադրախմայի նշանակությամբ (Shmitt-Korte, Price 1994, 121): Հրեական գրականության մեջ երբեմն *շեկելը* (տետրադրախմամ, ստատեր) օգտագործվում է սրբազան հարկի փոխարեն, այսինքն՝ *կեսշեկելի* (դիդրախմամ) նշանակությամբ, իսկ որոշ դեպքերում այս երկու դրամական միավորները տարբերակվում են առանձին եզրույթներով՝ *ընդհանուր շեկել* և *սրբազան շեկել*: Ընդհանուր *շեկել* անվանումով հասկացվում էր ստատերը կամ տյուրոսյան տետրադրախմամն՝ (13.5 գ.), իսկ սրբազան *շեկել*-ով՝ կեսշեկել կամ դիդրաքմե (6.75 գ.) (Shmitt-Korte, Price 1994, 126 – 127):

Սրբության սիկղի տակ պետք է հասկանալ կեսշեկելը (6.75 գ.), որը, ըստ Աստվածաշնչի, տաճարին նվիրաբերվող դրամական միավորն էր: Վերջինս համապատասխանում էր *դիդրաքմեի* քաշին: *Դիդրաքմեի* և *սրասրերի* հարաբերակցության մասին հետաքրքիր տեղեկություն ենք քաղում Նոր Կտակարանից. «Երբ նրանք Կափառնայում եկան, երկդրամեան տուրքը պահանջողները մոտեցան Պետրոսին և ասացին. «Ձեր վարդապետը երկդրամեանը չի տալիս»: Նա դիմեց Քրիստոսին, որը պատասխանեց. «Գնա՛ ձով ու կարթ գցի՛ր, և առաջին Ձուկը, որ դուրս կելնի, վերցրո՛ւ ու բա՛ց նրա բերանը և մի սատեր կգտնես. ա՛ռ այն և իմ ու քո փոխարեն նրանց կտաս» (Մատթ. ԺԷ, 24 – 27): Այս հատվածից պարզ երևում է, որ *սասրեր-սրասրերը* (*ընդհանուր շեկել, տետրադրախմամ*) հավասար էր երկու դիդրաքմեի կամ երկու սրբազան շեկելի: Տաճարին վճարվող սրբազան կամ կես շեկելը հայկական աղբյուրներում հիշատակվող սրբազան սիկղն է, որը հավասար

էր Բ *դրամ* (6.65 գ): Տաճարին վճարվող կեսշեկերը համապատասխանում է հայկական աղբյուրներում հիշատակվող սրբազան սիկդին, որը հավասար էր Բ դրամի՝ 6.65 գ. քաշով (Զոհրաբյան 1921, 107):

Հայկական աղբյուրները նույնպես հաստատում են, որ Հրեաստանը օգտագործել է ավելի թեթև փյունիկյան (տյուրոսյան) տետրադրախման (սատեր): «Մին սատերն (=տետրադրախմա) սակավին չպակաս է ի Դ դրամեն, որ է կեսունկոյ (= 13.6 գ.)» (Վարդանյան 1989, 231):

Հրեական և ասորական աղբյուրները հաղորդում են, որ հռոմեական դրամներն Արևելքում հանդես էին գալիս արամեերեն անվանումներով (Schmitt-Korte, Price 1994, 127): Օրինակ, հռոմեական արծաթե *դենարիոսը* կոչվում էր *զուզ* կամ *զուզան*, իսկ տետրադրախման՝ շեկել:

Շեկելը որպես սրբազնության խորհրդանիշ

Դիոկղետիանոսը գլխահարկի չափը սահմանել էր դիդրախմայի չափով, այն է. 6.5 գ, որն էլ 6-րդ դարում ընդունեց Սասանյան Իրանը՝ Խոսրով Ա-ի բարեփոխումներից հետո: Դիդրախման որպես գլխահարկի դիմաց գանձվող հիմնական չափի միավոր սասանյան շրջանում հիշատակում է Մովսես Կաղանկատվացին. «Սովորութեան աշխարհագրի Պարսից թագաւորութեան զգլխահարկ զդիդրաքմա» (Կաղանկատվացի 1912, ԺԶ): Գլխահարկի գանձվող չափաբաժինը մոտեցնելով տաճարին վճարվող սրբազան շեքել/սիկդին, կայսրությունները ընդգծում էին իրենց կայսրական իշխանության սրբազնությունը:

615 թ. Բյուզանդիայի կայսր Հերակլեսը (610 – 641) մտցրեց դիդրաքմայի կշռով արծաթե դրամ, որը կոչվում էր հեքսագրամ և համապատասխանում էր 6 *գրամնար* քաշի: Գրամնար կշռային միավորը հիշատակվում է նաև հայկական աղբյուրներում. «Կշիո Զկետատաց լինի գրամարմի (=1.11 գ)» (Շիրակացի, 1979, Ե): Անանիա Շիրակացու մոտ հեքսագրամի կշռով հիշատակվում է երբայական սիկդը, հելլենական մետրը, որն «ըստ հռոմայեցոցն՝ մեղեալիս, և ըստ հայունս՝ փորչէն» (Շիրակացի 1979Ժ): Միլիարեսյա (=մելիարիս), դրամական միավորը թողարկվել է 4.5 գ կշռով և երբեք 6.65 գ. կշիռ չի ունեցել:

Այս դեպքում պետք է տարբերակել դրամի կշռային արժեքը նրա փոխանակային արժեքից: 7-րդ դարում՝ պարսկա-բյուզանդական պատերազմների ժամանակ, Բյուզանդիայում հաստատվում է ոսկու և արծաթի 1:14.4 հարաբերակցությունը, այն դեպքում, երբ երկու մետաղների հարաբերակցությունը 1:18 էր: Այդ պայմաններում Արևելքում շրջանառության մեջ մտցրած բյուզանդական 6.65 գ. հեքսագրամը (=դիդրաքմե) համարժեք է դառնում Արևմուտքում շրջանառվող 4.5 գ միլիարեսյին (Grierson 1968, 18):

Քանի որ հեքսագրամը առաջին հերթին նախատեսված էր Արևելքում շրջանառության համար, ուստի Հերակլեսը վերսկսեց Դիոկղետիանոսի օրոք մտցված 6.65 գ քաշով դրամական միավորի վերաթողարկումը: Հայկական աղբյուրները չեն հիշատակում Բյուզանդիայում ընդունված *հեքսագրամ* անվանումը, քանի որ Հայաստանում կիրառվում էր դրան համարժեք *դիդրաքմե* ձևը, ինչպես հաստատվել էր դեռ Դիոկղետիանոսի օրոք:

7-րդ դարում դարձավ թողարկված բյուզանդական *հեքսագրամները* նախ և առաջ նախատեսված էին բանակին վճարելու համար, քանի որ *դիդրաքմե/հեքսագրամը* Արևելքում ընդունված հարկային և ռազմական նպատակների համար կատարվող վճարումների հիմնական միավորն էր: Բյուզանդիան, ըստ պայմանավորվածության, պահպանում էր հավասարակշռությունը դրամական տարածաշրջանում, որտեղ ինքը ոսկե դրամների մատակարարն էր, իսկ Սասանյան Իրանը՝ արծաթե: Սակայն 7-րդ դարի պարսկա-բյուզանդական պատերազմները այնքան քայքայեցին սասանյան դրամական տնտեսությունը, որ Խոսրով Բ-ի (590 – 628) հաջորդների օրոք Իրանի դրամական թողարկումները հասան նվազագույնի, որն էլ հնարավորություն տվեց բյուզանդական հեքսագրամ/դիդրաքմեին նվաճելու Արևելքի շուկան: Դրանով է բացատրվում, որ Հայաստանից և հարևան երկրների տարածքներից գտնված 7-րդ դարի առաջին կեսով թվագրվող դրամական գանձերը բաղկացած են ոչ միայն սասանյան դրամներից, այլև բյուզանդական հեքսագրամներից: Այդ երևույթը պահպանվում է մինչև արաբների հաստատումն Արևելքում, այսինքն՝ 7-րդ դարի երկրորդ կեսը:

Հեքսագրամի շրջանառության մեջ մտցնելը ուներ նաև գաղափարախոսական կարևոր նշանակություն: 614թ. պարսիկները մտնում են Երուսաղեմ և գերեվարում Սուրբ Խաչը, տանելով Պարսկաստան: Հերակլիոս կայսեր կողմից 615 թվականից թողարկված արծաթե հեքսագրամը, որի դարձերեսին պարտկերված խաչը աստիճանների վրա խորհրդանշում էր Գողգոթան և Քրիստոսի խաչափայտը, նշանավորում էր Սուրբ Խաչը Երուսաղեմ վերադարձնելու նոր պայքարի սկիզբը, որը հաջողվեց միայն 628 թվականին: Բյուզանդական որոշ դրամների վրա, ինչպես օրինակ Կոստանտինոս II-ի (641 – 668) մոտ, խաչաձև երկար գայիտներ՝ կայսեր ձեռքին, հենց խաչափայտն է, որը վերադարձվեց Բյուզանդիային (Ջոհրաբյան 2017, 84):

Հեքսագրամը հունարեն ոչ միայն որոշակի քաշի դրամ էր նշանակում, այլև ամփոփում էր քրիստոնեական խորհուրդ. այն է վեցթևանի կամ Դավթի աստղ: Հեքսագրամ-վեցթևանի աստղը հունարեն I (ΙησοΙc) և X (Χριστός) տառերի համադրումն է, որը փոխարինում է լատիներեն Քրիստոսի անունը նշանակող խրիզմային՝ XR: Բանակին վճարվող հիմնական դրամական միավորի՝ դիդրաքմեի նոր անվանումը՝ հեքսագրամը թե՛ պատկերագրությամբ, թե՛ դրամի անվան գույգ նշանակությամբ, քարոզում էր բյուզանդական բանակի առջև դրված նպատակը: Այն է պայքարել և ազատել պարսկական գերությունից Քրիստոսի խաչափայտը և վերադարձնել Երուսաղեմը: Հեքսագրամը՝ որպես Դավթի աստղը խորհրդանշող բառ, ընդգծելու էր նաև Բյուզանդիայի կայսեր կապը Հրեական թագավորությունը հիմնող Դավիթ թագավորի և նրա սերունդ Քրիստոսի հետ: Սակայն ամենակարևորը դրամի քաշն էր, 6.65 գ., որը համապատասխանում էր սրբազան շեքելին՝ դառնալով Երուսաղեմի յուրատեսակ խորհրդանիշ:

Եզրակացություն

Կշռաքարի կշռային ստանդարտը, որը համապատասխանում է հրեա-փյունիկյան կշռային համակարգին, հիմք է տալիս ենթադրելու, որ այն Արտաշատ է

եկել Լևանտի տարածաշրջանից, ավելի ստույգ՝ հրեապաղեստինյան աշխարհից: Այն, որ Արտաշատը սերտ հարաբերություններ է ունեցել Հրեաստանի հետ և, հավանաբար, այստեղ եղել է հրեական համայնք, վկայում են ինչպես գրավոր աղբյուրները, այնպես էլ պեղումներով հայտնաբերված Հրեաստանի դրամները:

Բրոնզե կշռաքարը թվագրվում է մ.թ.ա. 2–1-ին դդ., որը կարելի է համարել հելլենիստական Հայաստանի՝ Լևանտի երկրների հետ առևտրատնտեսական հարաբերությունների ևս մի վկայություն:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՍԿԶԲՆԱԴԲՅՈՒՐՆԵՐ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Սկզբնաղբուրներ

ՇԻՐԱԿԱՑԻ 1979 – Անանիա Շիրակացի, Մատենագրություն, Թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Ա. Արրահամյանի և Գ. Պետրոսյանի, Երևան, 1979:
ԿԱՂԱՆԿԱՏՎԱՑԻ 1912 – Մովսէսի Կաղանկատուացոյ, Պատմութիւն Աղուանից աշխարհի, Թիֆլիս 1912:

Գրականություն

- ԶՈՀՐԱԲՅԱՆ 2017 – Զոհրաբյան Ա., Սրբազան սիկդն ըստ աղբյուրագիտական և դրամագիտական տվյալների, Կղզյակ, որ մեզ ետուր արև, Մխիթարյանների Միաբանության 300-ամյակին նվիրված հոբելյանական գիտաժողովի նյութեր, Երևան, «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈՆԿ, 2017:
- ԶՈՀՐԱԲՅԱՆ 2021 – Զոհրաբյան Ա., Հայաստանի դրամական տնտեսությունը III – X դարերում: Մասանյան և արաբական շրջան, Երևան, Հայաստանի պատմության թանգարան, 2021:
- ՎԱՐԴԱՆՅԱՆ 1989 – Վարդանյան Ռ., Հայաստանի չափերն ու կշիռները (V – XV դդ.), Երևան, Հնագիտության և ազգագրության ինստիտուտ ՀԽՍՀ ԳԱ, 1989:
- GRIERSON 1968 – Grierson Ph. Catalogue of the Byzantine Coins in the Dumbarton Oaks Collection and in the Whittemore Collection, Volume II, Part I, Washington, Dumbarton Oaks Center for Byzantine Studies. Trustees for Harvard University, 1968.
- HENDIN 2007 – Hendin, D. Ancient Scale Weights and Pre-Coinage Currency of the Near East, New York, 2007.
- HENDIN 2012 – Hendin D., Jewish Coinage of The Two Wars, Aims and Meaning, Judaea and Rome in Coins 65 BCE – 135 CE, edited by David M. Jacobson and Nikos Kokkinos, London, 2012, pp. 123 – 144.
- HOLLAND 2009 – Holland L., Weights and Weight-Like Objects from Caesarea Maritima. Hadera, 2009.
- IOSSIF 2014 – Iossif P. The Last Seleucids in Phoenicia: Juggling Civic and Royal Identity, "American Journal of Numismatics", New York, 2014, Second Series, № 26, pp. 61 – 87.
- KLEIN, ETC. 2022 – Klein S., Jansen M., Lichtenberger A., Tal O., Archaeometallurgical Analysis of Lead Weights and Sling Bullets from Seleucid Tell Iztabba: More on Lead Origin in Seleucid Palestine, "Journal of the Institute of Archaeology of Tel Aviv University", Volume 49, Tel Aviv, 2022, pp. 267 – 292
- MANNS 1984 – Some Weights of the Hellenistic, Roman and Byzantine Periods, Studium Biblicum Franciscanum Museum # 7. Jerusalem, 1984.
- MATTINGLY 1960 – Mattingly H., Roman Coins, London, 1960.

MESHORER 1984 – Meshorer Y. Hundred Ninety Years of Tyrian Shekels, Studies in Honor of Leo Miltenberg, Wetteren, 1984, pp. 171–180.

SHMITT-KORTE, PRICE 1994 – Schmitt-Korte K., Price M., Nabatean Coinage, Part III. The Nabatean Monetary System, Numismatic Chronicle, Volume 154, London, 1994, pp. 67–132.

БИКЕРМАН 1985 – Бикерман Э., Государство Селевкидов, Москва, 1985.

Armine Zohrabyan

PhD

History Museum of Armenia

zohrabyanarmine@yahoo.com

Boris Gasparyan

Institute of Archaeology and Ethnography NAS RA

borisg@virtualarmenia.am

Ani Adigyozyan

Institute of Archaeology and Ethnography NAS RA

aniadigyozyan@gmail.com

SCALE WEIGHT FOUND IN TERRITORY OF ANCIENT CAPITAL ARTASHAT

Keywords: Scale weight, seashell, monetary system, Artashat, shekel, Hellenistic, the Levant.

Scale weights of the ancient period are rare, so every such find can be a new word not only in the Armenia's history of the economy and culture, but also in antique archaeology of the region. Unfortunately, the scale weight that is the subject of the article was not found during the excavations, but was acquired from a private person. This does not allow a full study of the weight in its archaeological environment, which could have answered more questions. There are almost no data on the discovery of ancient weights from Armenia, including the capital of Artashat. At first glance, it seems strange, especially if we take into account the large number of foreign coins, several thousand sealings and imported luxury objects found in the territory of Artashat, which are evidence of the city as a developed trade center.

The bronze weight from in the territory of Artashat has the shape of a scallop seashell and weights 135.89 g, which corresponds to ten shekels according to the Tyrian light weight standard. The weight of the shekel/tetradrachm/stater, the main unit of the monetary system of Phoenician Tyre, varies from 12.5 to 14.5 grams and weighs lighter than the Attic tetradrachm (about 15.5–17.5 grams).

The standard of the weight, which corresponds to the Jewish-Phoenician weight system, gives reason to assume that it came to Artashat from the Levant region, more precisely from the Jewish-Palestinian world. The coins of Tyre with Melqart/Heracles on the obverse and an eagle on the reverse became money that the Jews paid the temple tax. These coins were issued in Tyrian lighter weight standard used in Jewish-Palestinian world. This weight-monetary system is discussed in Armenian medieval sources detailed in context of Bible metrology.

The fact that Artashat had close relations with Judea and, probably, there was a Jewish community here, is evidenced both by written sources and by the Judean coins found during excavations of Armenian ancient capital. The bronze scale weight dates from the 2nd–1st centuries BC, which can be considered as evidence of trade and economic relations between Hellenistic Armenia and the countries of the Levant.

Армине Зограбян

Кандидат исторических наук

Музей истории Армении
zohrabyanarmine@yahoo.com

Борис Гаспарян

Институт археологии и этнографии НАН РА
borisg@virtualarmenia.am

Ани Адигёзальян

Институт археологии и этнографии НАН РА
aniadigyozyalyan@gmail.com

ГИРЯ, НАЙДЕННАЯ НА ТЕРРИТОРИИ АНТИЧНОЙ СТОЛИЦЫ АРТАШАТ

Ключевые слова: Гиря, морская раковина, денежная система, Арташат, шекель, эллинистический, Левант.

Гири античного периода редко встречаются, поэтому каждая такая находка может быть новым словом не только в истории экономики и культуры Армении, но и в античной археологии региона. К сожалению, гиря, которая является предметом изучения в статье, не была найдена во время раскопок, а была приобретена у частного лица. Это не позволяет в полной мере изучить предмет в его археологической среде, которая могла бы ответить на больше вопросов. Данных о находках древних гирь из Армении, включая столицу Арташат, почти нет. На первый взгляд, это кажется странным, особенно если учесть большое количество монет практически из всего античного мира, несколько тысяч булл и импортных предметов роскоши, найденных на территории Арташата, свидетельствующие о том, что город являлся одним из развитых торговых центров.

Бронзовая гиря с территории столицы Арташат имеет форму ракушки-гребешка и вес 135,89 г, что соответствует десяти шекелей в соответствии с легким весовым стандартом Тира. Вес шекеля/тетрадрахмы/статера, основной единицы денежной системы финикийского Тира, колеблется от 12,5 до 14,5 г и весит легче, чем аттическая тетрадрахма (около 15,5–17,5 г).

Стандарт изучаемой гири, который соответствует иудео-финикийской весовой системе, дает основание предположить, что она пришла в Арташат из Леванта, а точнее из иудео-палестинского мира. Монеты Тира с Мелькарром/Гераклом на лицевой стороне и орлом на обратной стороне стали деньгами, которыми евреи платили храмовый налог. Эти монеты выпускались в более лёгким весовым стандартом, используемом в еврейско-палестинском мире. Иудейская денежно-весовая система подробно рассматривается в армянских средневековых источниках контексте библейских мер и весов.

Тот факт, что Арташат имел тесные отношения с Иудеей и, возможно, здесь была еврейская община, подтверждается как письменными источниками, так и иудейскими монетами, найденными во время раскопок древней столицы Армении. Бронзовая гиря датируется II-I веками до нашей эры. что можно рассматривать как свидетельство торгово-экономических отношений между эллинистической Арменией и странами Леванта.